ԳԱՆԱՏԱՅԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

# GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

**ԿԻՐԱԿԻ 27 Յունիս 2021** **221** **DIMANCHE, Le 27 Juin 2021**



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

## Ե ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ
## ՏՕՆ ԳԻՒՏԻ ՏՓՈՑ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

CINQUIÈME DIMANCHE APRÈs LA PENTECÔTE.
FÊTE DE LA DÉCOUVERTE DE LA CASSETTE
DE LA MÈRE DE DIEU

### Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(8.31-10.4)
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(13.24-30)

### Les lectures de la Bible d'aujourd'hui :

ROMAINS
8.31-10.4
MATTHIEU
13.24-30

ՊԱՏԱՐԱԳԻՉ ԵՒ ՔԱՐՈԶԻՉ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ

CÉLÉBRATION ET L’HOMELIE:
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
PRÊTRE PAROISSIAL

| | |
|---|---|
| Առաւօտեան ժամերգութիւն ժամը- | 9:30-ին |
| Office Matines à | 9h30 |
| Ս. Պատարագ- ուղիղ սփռում ժամը- | 10:30-ին |
| La Sainte Messe – En direct à | 10h30 |
| Հոգեհանգիստ - ուղիղ սփռում ժամը- | 12:30-ին |
| Office de Requieme – En direct à | 12h30 |

DIACRES – ACOLYTES

Organiste: Houry Manougian Bedrossian
Choeur Gomidas

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**LES LECTURES DE DIMANCHE**



**THE SUNDAY READINGS**

## ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԱԼԻ
## ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
## (8.31-10.4)

Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն համար. եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ պիտի ըլլայ մեզի հակառակ: Ան որ իր Որդիին չխնայեց, հապա մեր ամենուն համար մատնեց զանիկա, ալ ի՞նչպէս անոր հետ բոլոր բաները մեզի չի պարգեւեր: Ո՞վ է որ Աստուծոյ ընտրածներուն դէմ մեղադիր կ'ըլլայ: Աստուած է որ կ'արդարացնէ: Ուրեմն ո՞վ է որ կը դատապարտէ: Քրիստոս է որ մեռաւ, մանաւանդ որ յարութիւն ալ ա-ռաւ ու Աստուծոյ աջ կողմն է, որ նաեւ մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ: Ուրեմն ո՞վ պիտի զատէ մեզ Քրիստոսին սէրէն. տառապա՞նքը, կամ նեղութի՞ւնը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞ւնը, կամ վտա՞նգը, կամ սո՞ւրը. Ինչպէս գրուած է. «Ամէն օր քեզի համար կը սպաննուինք. մորթուելու ոչխարի պէս կը սեպուինք». Հապա այս ամէն բաներուն մէջ ա՛լ աւելի յաղթող կ'ըլլանք անո՛վ, որ մեզ սիրեց: Վասն զի ես հաստատ գիտեմ թէ ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակ-ները, ո՛չ իշխանութիւնները, ո՛չ զօրութիւնները, ո՛չ ներկայ բաները, ո՛չ գալու բաները, Ո՛չ բարձրութիւնը, ո՛չ խորունկութիւնը եւ ո՛չ ուրիշ արարած կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն՝ որ Քրիստոս Յիսուս մեր Տէրոջմով է:

Ստոյգը կ'ըսեմ Քրիստոսով ու չեմ ստեր, իմ խիղճս ալ ինծի կը վկայէ Սուրբ Հոգիով, Որ մեծ տրտմութիւն է ինծի ու իմ սրտիս ցաւը ան-պակաս է: Քանզի ես ինքս կը փափաքէի նզովուիլ Քրիստոսէն, մարմ-նի կողմէ իմ եղբայրներուս ու ազգականներուս համար, Որոնք Իս-րայելացի են. որոնցն է որդեգրութիւնը, փառքը, ուխտերը, օրէնսդրու-թիւնը, պաշտօնն ու խոստումները: Իրենցն են նահապետները, Քրիս-տոս ալ իրենցմէ եկաւ մարմնի կողմանէ, որ ինքը օրհնեալ Աստուած է ամենուն վրայ յաւիտեանս: Ամէն: Բայց Աստուծոյ խօսքը երբեք գետին ինկած չէ. քանզի ոչ թէ ամէն անոնք որ Իսրայէլէն են՝ Իսրա-յելացի են եւ ոչ թէ Աբրահամին սերունդ ըլլալնուն համար ամէնքը որդիներ են. այլ «Իսահակով քեզի սերունդ պիտի կոչուի»: Այսինքն՝ ո՛չ թէ անոնք որ մարմնին որդիներ են՝ Աստուծոյ որդիներ ալ են, հա-պա խոստումի որդիները սերունդ կը սեպուին: Վասն զի խոստումը այս էր, թէ՝ «Երբ դառնամ՝ Սառան որդի մը պիտի ունենայ»: Ո՛չ միայն այսքան, հապա Ռեբեկայէն ալ յայտնի է որ յղացաւ մէկէն, այսինքն՝ մեր Իսահակ հօրմէն.

Վասն զի տղաքը դեռ չծնած եւ դեռ աղէկ կամ գէշ բան մը չգործած, որպէս զի Աստուծոյ նախասահմանութիւնը հաստատ մնայ ընտրութեանը պէս, Ո՛չ թէ գործերէն, հապա անկէ՛ որ կանչեց, իրեն ըսուեցաւ թէ՝ «Մեծը պզտիկին պիտի ծառայէ». ինչպէս գրուած է թէ՝ «Յակոբը սիրեցի, բայց Եսաւը ատեցի»:

Ուրեմն ի՞նչ ըսենք: Միթէ Աստուծոյ քով անիրաւութի՞ւն կայ: Քա՛ւ լիցի: Վասն զի Մովսէսին կ'ըսէ. «Որու որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ ու որու վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ»: Ուրեմն մարդուն ուզելէն կամ ջանքէն չէ, հապա Աստուծմէ՝ որ կ'ողորմի: Քանզի գիրքը Փարաւոնին կ'ըսէ. «Անոր համար քեզ վերցուցի, որ իմ զօրութիւնս քեզմով ցուցնեմ ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատմուի»: Ուստի որո՛ւ որ ուզէ՝ կ'ո-ղորմի եւ որը ուզէ՝ կը խստացնէ:

Ուրեմն ինծի պիտի ըսես թէ՝ «Ա՛լ ինչո՞ւ մեղադիր կ'ըլլայ. վասն զի ո՞վ կրնայ անոր կամքին դէմ դնել»: Բայց դուն ո՞վ ես, ո՛վ մարդ, որ Աստուծոյ հակառակ պատասխան կու տաս: Միթէ ստեղծուածը իր Ստեղծողին կրնա՞յ ըսել թէ «Զիս ինչո՞ւ այդպէս շինեցիր»: Բրուտը իշխանութիւն չունի՞ կաւին վրայ՝ նոյն զանգուածէն ամաններ շինե-լու: Ոմանքը՝ պատուի, ուրիշներ՝ անարգանքի համար: Արդ՝ ի՞նչ կըր-նայ ըսել մէկը, եթէ Աստուած իր բարկութիւնը եւ զօրութիւնը ցուցնելէ առաջ, շատ համբերութիւն եւ երկայնամտութիւն ցոյց տայ ա՛յն ա-նօթներուն, որոնք բարկութեան առարկայ եղած են եւ կորուստի դա-տապարտուած, եւ կամ եթէ ուզէ իր փառքին ճոխութիւնը ցուցնել ո-ղորմութիւն գտնող անօթներուն, այն փառքին համար, որ նախապէս պատրաստեց. Այսինքն՝ մեզի՝ որ կանչեց, ո՛չ թէ միայն Հրեաներէն, հապա հեթանոսներէն ալ. Ինչպէս Ովսէէի մէջ ալ կ'ըսէ. «Իմ ժողո-վուրդս չեղողը 'իմ ժողովուրդս' պիտի կոչեմ ու սիրելի չեղողը՝ 'սի-րելի': Այն տեղ՝ ուր անոնց ըսուեցաւ թէ՝ 'Դուք իմ ժողովուրդս չէք', հոն անոնք 'կենդանի Աստուծոյ որդիները' պիտի կոչուին»: Եսայի ալ Իսրայէլի համար կ'աղաղակէ. «Եթէ Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւազին չափ ալ ըլլայ, միայն մնացորդ մը պիտի ազատի: Քանզի Տէրը համառօտ եւ կտրուկ կ'ընէ արդարութեամբ. վասն զի Տէրը կարճ բան մը պիտի ընէ երկրի վրայ»: Եւ ինչպէս Եսայի նախապէս ըսաւ. «Եթէ զօրաց Տէրը մեզի սերունդ թողուցած չըլլար, մենք Սոդոմի պէս պիտի ըլլայինք ու Գոմորի պիտի նմանէինք»:

Ուրեմն ի՞նչ ըսենք: Թէ հեթանոսները որոնք արդարութեան չէին հետեւեր՝ արդարութեան հասան, ա՛յն արդարութեան՝ որ հաւատքէն է. Բայց Իսրայէլ, որ արդարութեան օրէնքին կը հետեւէր, արդարութ-եան օրէնքին չհասաւ: Ինչո՞ւ համար. վասն զի ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ օրէնքին գործերով ուզեց արդարանալ: Անոնք գայ-թակղութեան վէմին վրայ գլորեցան. Ինչպէս գրուած է. «Ահա Սիօնի մէջ

գայթակղութեան քար մը կը դնեմ ու գլորելու վէմ մը. եւ ամէն ով որ անոր հաւատայ, պիտի չամչնայ»:

Եղբայրնե՛ր, սրտանց կը փափաքիմ ու կ՚աղօթեմ Աստուծոյ, որ Իսրայէլը փրկէ: Վասն զի ես կը վկայեմ անոնց համար թէ Աստուծոյ համար նախանձախնդիրներ են, թէեւ ո՛չ գիտակցաբար: Վասն զի անոնք Աստուծոյ արդարութիւնը չճանչնալով՝ իրենց արդարութիւնը հաստատել ուզելով, Աստուծոյ արդարութեան չհնազանդեցան: Քան-զի օրէնքին վախճանը Քրիստոս է ամէն հաւատացեալի արդարութ-եան համար:

## ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
## (13.24-30)

Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց ու ըսաւ. «Երկնքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ բարի սերմ ցա-նեց: Երբ մարդիկ կը քնանային իր թշնամին եկաւ ու ցորենին մէջ ո-րոմ ցանեց եւ գնաց: Երբ խոտը բուսաւ ու պտուղ բերաւ, անկէ յետոյ որոմն ալ երեւցաւ: Ուստի տանտիրոջ ծառաները մօտեցան ու իրեն ըսին. ‘Տէ՛ր, չէ՞ որ դուն քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր. ուրեմն որոմը ուրկէ՞ է’: Անիկա ըսաւ անոնց. ‘Թշնամի մարդ մը ըրած է ա-տիկա’: Ծառաները իրեն ըսին. ‘Հիմա կ՚ուզե՞ս որ երթանք զանոնք քաղենք’: Ան ալ ըսաւ. ‘Ո՛չ, չըլլայ թէ որոմը քաղած ատեննիդ ցորենն ալ անոր հետ փրցնէք: Թող տուէ՛ք որ երկուքն ալ մէկտեղ աճին մինչեւ հունձքի ատենը: Եւ հունձքի ատենը հնձողներուն պիտի ըսեմ. ‘Առաջ որոմը քաղեցէք, խուրձ խուրձ կապեցէք այրելու համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք’»:

## ROMAINS
## 8.31-10.4

Lui qui n'a point épargné son propre Fils, mais qui l'a livré pour nous tous, comment ne nous donnera-t-il point aussi toutes choses avec lui? Qui intentera accusation contre les élus de Dieu? Dieu est celui qui justifie. Qui sera celui qui condamnera? Christ est celui qui est mort, et qui plus est, qui est ressuscité, qui aussi est à la droite de Dieu, et qui même prie pour nous. Qui est-ce qui nous séparera de l'amour de Christ? sera-ce l'oppression, ou l'angoisse, ou la persécution, ou la famine, ou la nudité, ou le péril, ou l'épée? Ainsi qu'il est écrit : nous sommes livrés à la mort pour l'amour de toi tous les jours, et nous sommes estimés comme des brebis de la boucherie.

Au contraire, en toutes ces choses nous sommes plus que vainqueurs par celui qui nous a aimés.

Car je suis assuré que ni la mort, ni la vie, ni les Anges, ni les Principautés, ni les Puissances, ni les choses présentes, ni les choses à venir, Ni la hauteur, ni la profondeur, ni aucune autre créature, ne nous pourra séparer de l'amour de Dieu, qu'il nous a [montré] en Jésus-Christ notre Seigneur.

Je dis la vérité en Christ, je ne mens point, ma conscience me rendant témoignage par le Saint-Esprit, Que j'ai une grande tristesse et un continuel tourment en mon cœur. Car moi-même je souhaiterais d'être séparé de Christ pour mes frères, qui sont mes parents selon la chair; Qui sont Israëlites, desquels sont l'adoption, la gloire, les alliances, l'ordonnance de la Loi, le service divin, et les promesses. Desquels [sont] les pères, et desquels selon la chair [est descendu] Christ, qui est Dieu sur toutes choses, béni éternellement; Amen!

Toutefois il ne se peut pas faire que la parole de Dieu soit anéantie; mais tous ceux qui sont d'Israël, ne sont pas pourtant Israël. Car pour être de la semence d'Abraham ils ne sont pas tous ses enfants; mais, c'est en Isaac qu'on doit considérer sa postérité. C’est-à-dire, que ce ne sont pas ceux qui sont enfants de la chair, qui sont enfants de Dieu; mais que ce sont les enfants de la promesse, qui sont réputés pour semence. Car voici la parole de la promesse : je viendrai en cette même saison, et Sara aura un fils. Et non seulement cela; mais aussi Rebecca, lorsqu'elle conçut d'un, [savoir] de notre père Isaac. Car avant que les enfants fussent nés, et qu’ils n’eussent fait ni bien ni mal, afin que le dessein arrêté selon l'élection de Dieu demeurât, non point par les œuvres, mais par celui qui appelle; Il lui fut dit : le plus grand sera asservi au moindre; Ainsi qu'il est écrit : j'ai aimé Jacob, et j'ai haï Esaü.

Que dirons-nous donc : y a-t-il de l'iniquité en Dieu? à Dieu ne plaise! Car il dit à Moïse : j'aurai compassion de celui de qui j'aurai compassion; et je ferai miséricorde à celui à qui je ferai miséricorde. Ce n'est donc point du voulant, ni du courant : mais de Dieu qui fait miséricorde. Car l'Ecriture dit à Pharaon : je t'ai fait subsister dans le but de démontrer en toi ma puissance, et afin que mon Nom soit publié dans toute la terre. Il a donc compassion de celui qu'il veut, et il endurcit celui qu'il veut.

Or tu me diras : pourquoi se plaint-il encore? car qui est celui qui peut résister à sa volonté? Mais plutôt, ô homme, qui es-tu, toi qui contestes contre Dieu? la chose formée dira-t-elle à celui qui l'a formée : pourquoi m'as-tu ainsi faite? Le potier de terre n'a-t-il pas la puissance de faire d'une même masse de terre un vaisseau à honneur, et un autre à déshonneur? Et [qu'est-ce], si Dieu en voulant montrer sa colère, et donner à connaître sa puissance, a toléré avec une grande patience les

vaisseaux de colère, préparés pour la perdition? Et afin de donner à connaître les richesses de sa gloire dans les vaisseaux de miséricorde, qu'il a préparés pour la gloire; Et qu'il a appelés, [c'est à savoir] nous, non seulement d'entre les Juifs, mais aussi d'entre les Gentils.

Selon ce qu'il dit en Osée : j'appellerai mon peuple celui qui n'était point mon peuple; et la bien-aimée, celle qui n'était point la bien-aimée;

Et il arrivera, qu'au lieu où il leur a été dit : vous n'êtes point mon peuple, là ils seront appelés les enfants du Dieu vivant.

Aussi Esaïe s'écrie au sujet d'Israël : quand le nombre des enfants d'Israël serait comme le sable de la mer, il n'y en aura qu'un [petit] reste de sauvé. Car le Seigneur consomme et abrège l'affaire en justice : il fera, dis-je, une affaire abrégée sur la terre.

Et comme Esaïe avait dit auparavant : si le Seigneur des armées ne nous eût laissé quelque semence, nous eussions été faits comme Sodome, et eussions été semblables à Gomorrhe.

Que dirons-nous donc? que les Gentils qui ne cherchaient point la justice, ont atteint la justice, la justice, dis-je, qui est par la foi. Mais Israël cherchant la Loi de la justice, n'est point parvenu à la Loi de la justice. Pourquoi? parce que ce n'a point été par la foi, mais comme par les œuvres de la Loi; car ils ont heurté contre la pierre d'achoppement.

Selon ce qui est écrit : voici, je mets en Sion la pierre d'achoppement; et la pierre qui occasionnera des chutes ; et quiconque croit en lui ne sera point confus. Mes frères, quant à la bonne affection de mon cœur, et à la prière que je fais à Dieu pour Israël, c'est qu'ils soient sauvés. Car je leur rends témoignage qu'ils ont du zèle pour Dieu, mais sans connaissance. Parce que ne connaissant point la justice de Dieu, et cherchant d'établir leur propre justice, ils ne se sont point soumis à la justice de Dieu. Car Christ est la fin de la Loi, en justice à tout croyant.



## MATTHIEU
## 13.24-30

Il leur proposa une autre similitude, en disant : le Royaume des cieux ressemble à un homme qui a semé de la bonne semence dans son champ. Mais pendant que les hommes dormaient, son ennemi est venu, qui a semé de l'ivraie parmi le blé, puis s'en est allé. Et après que la semence fut venue en herbe, et qu'elle eut porté du fruit, alors aussi parut l'ivraie. Et les serviteurs du père de famille vinrent à lui, et lui dirent : Seigneur, n'as-tu pas semé de la bonne semence dans ton champ ? d'où vient donc qu'il y a de l'ivraie? Mais il leur dit : c'est l'ennemi qui a fait cela. Et les serviteurs lui dirent : veux-tu donc que nous y allions, et que nous cueillions l'ivraie? Et il leur dit : non; de peur qu'il n'arrive qu'en cueillant l'ivraie, vous n'arrachiez le blé en même temps. Laissez-les croître tous deux ensemble, jusqu'à la moisson; et au temps de la moisson, je dirai aux moissonneurs : cueillez premièrement l'ivraie, et la liez en faisceaux pour la brûler; mais assemblez le blé dans mon grenier.

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ

**Յունիս – Juin**

**28, Երկուշաբթի – Սրբոցն Կալիստրատոսի,**
**քառասուն եւ ինն վկայիցն եւ Ղուկկիանոսի քահանային:**
Lundi 28 – Jeûne. Fête de Saint Calistrate,
des 49 martyres et du prêtre Lucien.

**29, Երեքշաբթի – Սրբոյն Զաքարիայի մարգարէին:**
Mardi 29 – Jeûne. Fête du Saint Prophète Zacharie.

**30, Չորեքշաբթի – Պահք**
Mercredi 30– Jeûne

**Յուլիս – Juillet**

***1, Հինգշաբթի – Սրբոյն Եղիսէի մարգարէին*:**
Jeudi 1– Fête du Saint Prophète Elisée.

**2, Ուրբաթ – Պահք**
Vendredi 2 – Jeûne

**3, Շաբաթ– Սրբոց երկոտասանից առաքելոցն Քրիստոսի**
**եւ Սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ առաքելոյն:**
Samedi 3 - Fête des Saints 12 Apôtres du Christ
et de Saint Paul, le treizième.

## Տօներ

Շաբաթ, 26 Յունիս 2021




Ս. Տրդատ թագաւորի, Աշխէն Թագուհիի եւ Խոսրովիդուխտ Կոյսի Յիշատակութեան Օր

Հայոց Արշակունեաց Տրդատ արքան առաջինն էր աշխարհի մէջ, որ 301 թուականին Քրիստոն-էութիւն ընդունեց երկրին Պետական կրօն՝ դառնալով Քրիստոնէութեան տարածման մեծ-ագոյն ջատագովը Հայաստանի մէջ: Անոր անունին կողքին պատմութիւնը կը յիշատակէ նաեւ՝ Աշխէն թագուհիին եւ թագաւորաքոյր Խոսրովիդուխտ կոյսին անունները:

Կիրակի, 27 Յունիս 2021

Սուրբ Աստուածածնի Տուփի Գիւտի Տօն



Աւանդութեան համաձայն՝ Ս. Աստուածածնի տուփը, ուր պահուած է Տիրամօր գլխանոցը, յայտնաբերած են երկու Յոյն իշխաններ, որոնք Երուսաղէմ ուխտի երթալու միջոցին Գալիլիոյ մէջ Հրեայ կնոջ մօտ կը տեսնեն տուփը, որուն զօրութեամբ հիւանդներ կը բժշկուէին: Տուփը փոխելով իր կրկնօրինակով՝ երիտասարդները այդ կը բերեն Կ. Պոլիս եւ կը յանձնեն պատրիարքին: Պատրիարքը տուփը կը զետեղէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւ կը հաստատէ Ս. Աստուածածնի տուփի գիւտին տօնը: Այս տօնը Հայ Առաքելական Եկեղեցին սկսած է տօնել 18-րդ դարուն՝ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի կարգադրութեամբ:

## Holidays

Saturday, June 26, 2021

**Commemoration of Sts. Tiridates, King of Armenia, Queen Ashkhen and Princess Khosrovidoukht**

In 287 A.D. Tiridates (Trdat), from the royal house of Arshakouni, assumes the throne which once belonged to his father and becomes Tiridates III, King of Armenia. His name is inextricably linked with the Patron Saint of the Armenian Church, St. Gregory the Illuminator. In 301 A.D. the king releases the Christian Gregory from imprisonment and proclaims Christianity to be the State Religion of Armenia. In doing so, the king becomes the greatest advocate of spreading Christianity throughout the country.

The names of Queen Ashkhen and the King's sister, Khosrovidoukht are closely related to the Great Conversion of Armenia as well. Princess Khosrovidoukht's vision of a cure for the King's incurable illness causes St. Gregory the Illuminator to be liberated from the dungeon of the deep pit. Gregory then is free to begin the process of spreading the light of Christianity, which is the Gospel of Jesus Christ.

According to Greek historian Agathangelos, the King, the Queen and the Princess meet St. Gregory upon his return from Caesarea, to where he had traveled to receive episcopal ordination. Following a period of fasting and preparation, Gregory baptizes the three of them. They are followed by the baptism of the royal court and the nobles of Armenia. Through the baptism by Gregory, Tiridates becomes the first king in the world to rule over a Christian country. History also reveals that Tiridates, Ashkhen and Khosrovidoukht personally participate in the construction of the Cathedral of Holy Etchmiadzin. The stones they used to build the cathedral were brought to Vagharshapat from the slopes of Biblical Mount Ararat.

## Sunday, June 27, 2021

### Feast of the Discovery of St. Mary's Box

According to tradition, while en route to Jerusalem on a pilgrimage, two Greek princes come across a chest that once belonged to St. Mary. In Galilee, they see a large crowd gathered in front of a Jewish woman's house. They inquire and find that the sick is being healed due to the inexplicable power of the chest. The princes bring the box to Constantinople and present it to the Patriarch, who places it in the Church of St. Mary. The Patriarch then establishes the Feast of the Discovery of St. Mary's Box.

The Armenian Church celebrates this feast upon the order of the Catholicos Simeon from Yerevan, who accepted this tradition from the Greek Orthodox Church in the late 18th century.



## ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԵՐ

Մեծագոյն աղքատութիւնը սրտի եւ հոգիի աղքատութիւնն է:

Մայր Թերեզա

Աշխատանքի պարգեւը, վարձատրութիւնն է, ո՛չ թէ հանգիստը, այլ աւելի շատ աշխատանքը: Ծուլութիւնը կրնայ հրապուրիչ թուալ, սակայն աշխատանքն է, որ բաւարարուածութիւն, գոհութիւն կու տայ:

Աննէ Ֆրանկ

Յոռետեսը կը գանգատի քամիէն, լաւատեսը կ՛ակնկալէ, թէ ան կը փոխէ իր ուղղութիւնը, իրատեսը կ՛ուղղէ առագաստները:

Ուիլեամ Ա. Ուարդ

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

## SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

## SERVICE FOR THE REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 27 Յունիս 2021

OFFICE DE REQUIEM

DIMANCHE, LE 27 JUIN 2021

**Աբրահամեան եւ Ղուկասեան ընտանիքներ,**
**հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն**
**իրենց սիրեցեալ հարազատին՝**
**ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ**
**(VAHAKN KHATCHATRYAN)**
(մահացած Հայաստան)
հոգւոյն ի հանգիստ:

**Տիկ. Մարկարիթ Օզչիլինկիրեան**
**հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ**
**իր սիրեցեալ ամուսնոյն՝**
**ԽԱՉԻԿ ՕԶՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ**
**(HACIK OZCILINGIRYAN)**
մահուան 10-րդ տարելիցին առիթով:

**Պրն. Պօղոս Աճէմեան եւ զաւակները,**
**Ալէն եւ Ալին Տէմիրճեան,**
**հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն**
**իրենց սիրեցեալ կնոջ եւ մօր՝**
**ԹԱԳՈՒՀԻ ԱՃԷՄԵԱՆԻ**
**(TAKOUHIE ADJEMIAN)**
մահուան 3-րդ տարելիցին առիթով:
հոգիներուն ի հանգիստ:
**ԵՒ**
**ԱՅՎԱԶԵԱՆ, ՍՈՂՈՄՈՆԵԱՆ**
**ԵՒ ԱՃԷՄԵԱՆ**
գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ:

**Պրն. Արթօ Մանուկեան,**
**Տ. եւ Տիկ. ԱրԷն եւ ՄատլԷն Մանուկեան**
**եւ զաւակը՝ Ալեք,**
**Օրդ. Լոռի Մանուկեան,**
**հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն**
**իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝**
**ԱՆԻ**
**ԳԱԼԵՄՃԵԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ**
**( ANI KALEMJIAN MANOUKIAN)**
մահուան 3-րդ տարելիցին առիթով:

## ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

**ՑԱՒԱԿՑԱԳԻՐ**
**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի**
**Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը**
**իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն՝**
**Գունթերեան ընտանիքին՝**
**Ողբացեալ**
**Ալեքս Գունթերի (5 Յունիս 2021)**

**SYMPATHY & CONDOLENCES**
**The Parish Priest and the Parish Council of the**
**St. Gregory the Illuminator Armenian Cathedral**
**express their deepest condolences to the**
**Kunterian family**
**on the loss of their beloved:**
**Alex Kunter (June 5, 2021).**

# ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON À L'ÉGLISE** — **DONATION FOR THE CHURCH**

**Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC**

**Donations of June 2021 have been received with great appreciation**

**CHURCH:**

**FOR A VOW:**

Mrs. Elina Petrosyan $50

**HOKEHANKISD (Requiem Services)**

**IN MEMORY OF:**

THE LATE TAKOUHIE ADJEMIAN:

Mr. Boghos Adjemian $50

THE LATE VERGINIA LEYLEKIAN:

Mr. Serge Tcholakian $150

Mr. Pierre Bataini $100

THE LATE MANOUSH BEGLARIAN:

Mr. & Mrs. Yado & Knarique Melik $100

Այս շաբթուայ
Ս. Սեղանի ծաղիկները
կը հովանաւորէ՝
ԹԱՇՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

The Altar Flowers
of this week
sponsored by:
TASHDJIAN FAMILY



**Ս. ԽՈՐԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ**

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին Ս. Խորանին ծաղիկներ նուիրել կրնան հեռաձայնել եկեղեցւոյս գրասենեակ (514) 279-3066:

**ALTAR FLOWERS:**

Parishioners who wish to donate flowers for the Holy Altar are asked to call the Church office (514) 279-3066.

Առցանց նուիրատուութիւններու համար
հաճեցէք սեղմել ներքոնշեալ կապը.-

For online donations please click the link below:

**saintgregory.ca**

Donate

Շնորհակալութիւն ձեր նուիրատուութեան համար:

Merci pour votre don!

Thanks for your donation!



**Չարի հնարքներուն դէմ աղօթք**

Շնորհատու՛ բարիքներու, Տէ՛ր, կ'աղաչեմ Քեզի, փարատէ՛ մեր սրտերուն աղջամուղջը եւ հեռու վանէ չարին մոլորեցնող հնարքները.

պահպանէ՛ բանսարկուի պատրանքներէն եւ շնորհէ մեզի հաւատքով ապաւինելու ամենասուրբ Երրորդութեանդ՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին,

այժմ եւ միշտ, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:





## ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ՝ ՉԱՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իմ անձս քու ձեռքերուդ մէջ է միշտ,
եւ Սուրբ Խաչիդ կը յուսամ,
թագաւոր երկնաւոր:
Քու սուրբերուդ բազմութիւնը
որպէս բարեխօս ունիմ առջեւդ:
Դուն, որ կը մտածես ամենուս մասին,
մի անտեսեր Քեզի ապաւինողները,
այլ խաղաղութեան մէջ պահպանէ
պատուական եւ սուրբ Խաչովդ:
...Փրկէ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն:
Արժանի ըրէ գոհանալով փառք տալ քեզի
Հօր Եւ Սուրբ Հոգիի հետ,
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

## PRIERE A LA SAINTE CROIX POUR ETRE PROTEGE DES MECHANTS

Mon âme est toujours entre tes mains et, dans la sainte Croix, j'ai placé ma confiance, ô Roi du ciel. Je regarde la multitude de tes saints comme intercesseurs auprès de toi. O toi, le longanime envers tous, ne méprise pas ceux qui ont trouvé refuge en Toi, mais protège-les dans la paix avec ta précieuse et sainte Croix.

…Délivre-nous des ennemis visibles et Invisibles. Rends-nous dignes de te rendre grâces et de te glorifier avec le Père et le Saint-Esprit, maintenant et toujours et pour l'éternité de l'éternité. Amen.

**ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ**

**Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը կը շնորհաւորեն
Ակպապեան,Չօմլէքճի, Տէմիրճեան եւ Մերաքեան ընտանիքները իրենց զաւակներուն
Ս. Մկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով:

16 Մայիս 2021
Նարեկ Ակպապեան
30 Մայիս 2021
Ալինա Չօմլէքճի
5 Յունիս 2021
Տէնի Սէյրան Տէմիրճեան
13 Յունիս 2021
Մարլօ Գօգօ Մերաքեան

**CONGRATULATIONS**

The Parish Priest and the Parish Council
of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral
Extend their congratulations
to Agbabian, Comlekci, Demirdjian, & Merakyan families
on occasion of their children's Baptism

May 16, 2021
Nareg Agbabian
May 30, 2021
Alina Comlekci
June 5, 2021
Danny Seyran Demirdjian
June 13, 2021
Marlo Koko Merakyan

**ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ**

**Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ**

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի**
**Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը**
**կը շնորհաւորեն Քոճաւագեան եւ Պչաքճեան ընտանիքները**
**իրենց զաւակներուն՝**

**8 Մայիս 2021**

**Գէորգ (Ճորճ) Քոճաւագեանի եւ Սարին Պչաքճեանի**
**Ս. Պսակադրութեան ուրախ առիթով:**

**CONGRATUALTIONS**

The Parish Priest and the Parish Council
of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral extend their congratulations to
Kodjaavakian & Bechakjian families of
their Son's and daughther's Wedding
May 8, 2021
Kevork (George)Kodjavakian & Sarine Bechakjian

**ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ**

**Ս. ՊՍԱԿԱԴՐՈՒԹԵԱՆ**

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի**

**Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը**

**կը շնորհաւորեն Լէպլան եւ Սուքիասեան ընտանիքները**

**իրենց զաւակներուն`**

**12 Յունիս 2021**

**Մաքսիմ Լէպլանի եւ Անիթա Սուքիասեանի**
**Ս. Պսակադրութեան ուրախ առիթով:**

**CONGRATUALTIONS**

The Parish Priest and the Parish Council
of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral extend their congratulations to
Leblanc & Soukiassian families of
their Son’s and daughter’s Wedding
June 12, 2021
Maxime Leblanc & Anita Soukiassian



# Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

### ՍԻՐԱԼԻՐ ՀՐԱՒԷՐ ԲՈԼՈՐԻՆ

### CORDIAL INVITATION TO ALL



Հաճոյքով կը յայտնենք մեր հաւատացեալներուն թէ
շարունակաբար եկեղեցին բաց է շաբթուան ընթացքին
Երկուշաբթիէն – Ուրբաթ
10:30-էն մինչեւ կ.ե. ժամը 4:30
Շաբաթ –11:00 – 3:00
Կիրակի- 9:30 – 2:00
Անոնք որոնք իրենց ուխտի կատարման համար կը փափաքին այցելել եկեղեցի, աղօթելու եւ մոմավառութեան համար, կրնան շարունակել իրենց աստուածահաճոյ առաքելութիւնը:
Եկեղեցւոյ դռները բաց են մեր բոլոր հաւատացեալներուն համար:

We are pleased to inform our faithful that during weekdays the Church is open from:
Saturday - Friday
At 10:30 AM to 4:30 PM
Saturday – 11:00 AM – 3:00 PM
Sunday – 9:30 AM – 2:00 PM
Those who wish to visit the Church to fulfill their covenant, pray, and light candles can continue their mission.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008 stgregorychurch@gmail.com

# ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ԵՒ ԹԱՂՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԳԱՒՈՐՈՒՄ

# THE ARRANGEMENTS OF THE BURIAL & FUNERAL SERVICES




Մեր սիրելի հաւատացեալներուն կը փափաքինք
տեղեակ պահել թէ՝
յուղարկաւորութեան կարգի ծրագրաւորման եւ թաղման ծառայութիւններու կարգաւորման համար համեստօրէն կը խնդրուի
**<u>առաջին հերթին հեռաձայնել</u>** եկեղեցւոյ գրասենեակ, ուր հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին համաձայն պիտի կիրարկուին անրաժեշտ միջոցները եւ եկեղեցւոյ միջոցաւ ձեռք պիտի առնուին եւ ուղղորդուին թաղման համապատասխան ծառայութեան:

Դիմեցէք մեզի հեռաձայնելով եկեղեցւոյ գրասենեակ՝
(514) 279-3066

We would like to inform our faithful that:
to set up a burial and funeral service ,
it is highly requested **before any other arrangements** to call the Church office, where the necessary arrangements will be made according to the convenience of the family members of the deceased, planning the church and the procedure of the funeral services.

Contact us at (514) 279-3066

**615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066**
**<u>stgregorychurch@gmail.com</u>**

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

# ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

**Առցանց – En direct/Live**

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## Շաբաթ, 26 Յունիս 2021

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**« Իսկ դուն երբ աղօթք կ’ընես, մտիր քու ներքին սենեակդ ու դուռդ գոցէ եւ աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ տեղ կը գտնուի եւ քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պիտի ընէ»: (Մտթ. 6:6):**

## Samedi, le 26 Juin 2021

Office du soir à 17h00.

**''Mais quand tu pries, entre dans ta chambre, ferme ta porte, et prie ton Père qui est là dans le lieu secret; et ton Père, qui voit dans le secret, te le rendra.'' (Matthieu 6 :6).**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

# ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
# ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

LIVE **Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**



**Չորեքշաբթի, 30 Յունիս 2021**
**Երեկոյեան ժամը 5:00-ին:**
**Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու երեկոյեան ժամերգութեան առցանց եկեղեցւոյ դիմատետրի էջով:**

**«Եւ այսպէս ըրէք, գիտնալով թէ ժամանակն է, որ քունէն արթննանք. վասն զի հիմա մօտ է մեզի փրկութիւնը՝ քան թէ այն ատեն որ հաւատացինք» (Հռոմ. 13:11):**

**Աղօթաբոյր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ հաւատացեալներուն:**

**SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON**
**avec le R.P. David Margaryan**
**Mercredi, le 30 Juin 2021 à 17h00.**

**Nous invitons nos chers fidèles à participer à service du soir via la page Facebook de l'Église.**

**''Cela importe d'autant plus que vous savez en quel temps nous sommes: c'est l'heure de vous réveiller enfin du sommeil, car maintenant le salut est plus près de nous que lorsque nous avons cru'' (Romans 13 :11).**

**Nous souhaitons des moments de prière à nos fidèles.**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

## Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար
## St. Gregory the Illuminator Armenian Cathedral

# ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ
# CONVERSATION SPIRITUELLE



**Չորեքշաբթի, 30 Յունիս 2021**
**երեկոյեան ժամը 6:30-ին**
**Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:**

Մեր սիրելի հաւատացեալները կրնան մասնակցիլ
Zoom ծրագիրի միջոցաւ:

Zoom ծրագիրի մասնակցութեան կապը ստանալու համար
հաճեցէք հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

**Mercredi, Le 30 Juin 2021 à 18h30**
**avec le R.P. David Margaryan**

Nous invitons nos chers fidèles
peuvent participer à travers le programme Zoom.

Pour obtenir le lien pour participer au programme Zoom
veuillez appeler le bureau de l'Église au (514)279-3066.

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066**
**Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ Ի ՄՈՆԹՐԷԱԼ

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL
OF MONTREAL

# ԱՄԱՌՆԱՅԻՆ ՓՈՔՐ ՎԱՃԱՌՔ

## ԽՄՈՐԵՂԷՆԻ ԵՒ ԱՆՈՒՇԵՂԷՆԻ ՎԱՃԱՌՔ

ՇԱԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ՝ 3 ԵՒ 4 ՅՈՒԼԻՍ 2021

**Կազմակերպութեամբ՝**
**Տիկնանց Յանձնախումբին եւ Օժանդակներուն**
**Առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. 3:00**
**եկեղեցւոյ պարտէզին մէջ:**

Անհրաժեշտ է պահպանել առողջապահական ուղղեցոյցները.-
2 մեթր ֆիզիքական հեռաւորութիւն եւ դիմակի գործածութիւն:

# SUMMER MINI-BAZAAR

## PASTRY SALES





**SATURDAY & SUNDAY**
**JULY 3 & 4, 2021**

**Organized by Ladies Auxiliary**
**From 10:00 AM to 3:00 PM - In the Church garden.**

It is necessary to keep the guidelines of a pandemic:
keeping 2- meter physical distancing & the use of a mask.





615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / Email: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻ**
**ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL**

# ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ

## (ՎԱՐԴԱՎԱՌ) առիթով

## Transfiguration of our Lord Jesus Christ

## (VARTAVAR)

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՌԻԿՕ

## NOTRE -DAME -DE -LOURDES ՍՐԲԱՎԱՅՐ

## PILGRIMAGE TO THE SANCTUARY NOTRE -DAME -DE -LOURDES (RIGAUD)

**43 RUE DE LOURDES, RIGAUD, QC**

# ԿԻՐԱԿԻ, 11 ՅՈՒԼԻՍ /SUNDAY, JULY 11, 2021

Ս. Պատարագ կէսօրէ ետք ժամը 12:30-ին
Holy Mass at 12:30 noon



Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ, Հոգեւոր Հովիւ
Celebrant & Preacher
Rev. Fr. David Margaryan, Parish priest

Մանրամասնութիւնները յաջորդիւ:
Details will be followed.



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail saintgregorychurch@gmail.com Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

## ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագաժահրի Covid-19 տարածման վտանգը, **ներկայիս Քէպէք նահանգը անցնելով Դեղին գօտիի, որուն համաձայն կը կիրարկուի հետեւեալ համակարգը .-**

- Մկրտութիւններու, պսակադրութիւններու եւ յուղարկաւորութիւններու պարագային **արտօնուած է առաւելագոյնը 50 հոգիի ներկայութիւն,** դիմակներու գործածութիւնը անհրաժեշտ է ամբողջ արարողութեան տեւողութեան ընթացքին, պահելով իրարմէ 2 մեթր հեռաւորութիւն:
- Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Ս. Պատարագներուն, ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն **առաւելագոյնը 250 հոգիի ներկայութիւն:**
- Կարելի է հետեւիլ նաեւ՝ առցանց եկեղեցւոյ դիմատետրի էջով –Facebook Live

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել Հոգեւոր Հովիւին, հեռ. (514) 448-2809:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

## IMPORTANT NOTICE

We would like to inform our parishioners that following the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19, **Quebec currently is in the yellow zone, as of according to new guidelines will be as follows:**

- **Up to 50 people are allowed** in the case of baptisms, marriages & funerals, the use of masks is required throughout the ceremony, keeping 2 m distance from each other.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies the attendance **is allowed a maximum of 250 people.**

Sunday, Divine Liturgies – On Facebook Live

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

For other questions, you can contact the Parish Priest tel. (514) 448-2809.

We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE

ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

# Note Importante

Nous vous informons chers croyants que conformément aux directives du gouvernement du Québec, après la déclaration les autorités de santé publique et des instructions du diocèse de l'Église apostolique arménienne au Canada, pour empêcher la propagation du virus de Covid-19,

le Québec est présentement dans la zone jaune, en date du selon l'Église selon les nouveaux directeurs actuels sera la suivante :

- **Jusqu'à 50 personnes sont autorisées** en cas de baptême, mariages et funérailles, l'utilisation de masques est obligatoire tout au long de la cérémonie, en gardant une distance de 2 m les uns des autres.
- Liturgies du dimanche de l'Église, services de prière et autres cérémonies, la participation maximale **est autorisée une capacité maximale de 250 personnes.**

Les St liturgies de dimanche, services et d'autres cérémonies de l'église peuvent être suivis en ligne sur la page Facebook de l'Église.

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Pour toutes autres questions, vous pouvez contacter le prêtre au tel: (514) 448-2809

Nous vous souhaitons surtout de bonne santé et le meilleur et espérons vous tenir informé par écrit de tout changement ou d'autres détails.

BUREAU DE L'ÉGLISE

ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com


## ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Սիրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:




## PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2